

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

#### **1. Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.**

Հակակոռուպցիոն կոմիտեում առկա գործերի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, այն կառավարելի դարձնելու միջոցով կոռուպցիոն ենթադրյալ հանցագործությունների նախաքննությունը պատշաճ և որակյալ իրականացնելու հրամայականով պայմանավորված մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ նաև՝ Նախագիծ):

**2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր.**

Նախագծի ընդունումը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման միջոցառումների ծրագրի 2-րդ կետի կարգավորմամբ, որով նախատեսվում է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ձևավորում և բնականոն գործունեության ապահովում:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին»

N 1363-Ա որոշմամբ «Կոռուպցիայի դեմ պայքարը» 5.5-րդ կետում նշվել է, որ ակնկալվում է առավել սեղմ ժամկետում ամբողջ ծավալով գործարկել Կոմիտեն, որը հազեցված կլինի անհրաժեշտ նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսներով:

Ուստի սույն Նախագծով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոմիտեի ձևավորումը ամրագրված է ռազմավարական նշված փաստաթղթերով, Հակակոռուպցիոն կոմիտեում քննիչների ծանրաբեռնվածությունը կարգավորելու եղանակով կապահովվի կոռուպցիոն ենթադրյալ հանցագործությունների նախաքննության պատշաճ, որակյալ, ժամանակին, ուստի նաև արդյունավետ իրականացումը:

### **3. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք):

Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն.

*«2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված կարգով երեսուն ինքնավար թափուր պաշտոնների համալրման օրվան հաջորդող օրը, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերի:*

*(...)*

*12. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ակտերի հաստատումից հետո՝ եռօրյա ժամկետում, հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հակակոռուպցիոն կոմիտեում 30 ինքնավար թափուր պաշտոնները ժամանակավոր զբաղեցնելու առաջարկություն է ներկայացնում: Սույն մասով նախատեսված անձինք ներկայացված առաջարկությանն իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը ներկայացնում են առաջարկությունն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում: Այն դեպքում, երբ համաձայնություն ներկայացրած անձանց*

թիվը գերազանցում է 30-ը, ժամանակավոր պաշտոնի նշանակվելու նախապայմանությունը տրվում է հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն հանցագործություններով նախաքննություն իրականացնող անձանց, իսկ եթե նրանց թիվը ևս գերազանցում է 30-ը՝ ավելի երկար փորձառություն ունեցող անձին, իսկ հավասար փորձառության դեպքում՝ տարիքով ավագին: Սույն մասով նախատեսված անձինք նշանակվում են հակակոռուպցիոն կոմիտեի համարժեք (բացառությամբ դրա անհնարինության դեպքի) պաշտոնների որպես պաշտոնակատար՝ պահպանելով հատուկ քննչական ծառայությունում չօգտագործված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցում ստանալու իրավունքը:

(...)

22. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերի հարուցման հարցի լուծումը և նախաքննության իրականացումը վերապահվում է հակակոռուպցիոն կոմիտեին: Այլ քննչական մարմիններում գտնվող քրեական գործերը (նյութերը) ենթակա չեն փոխանցման հակակոռուպցիոն կոմիտե, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

23. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված անձանց նշանակումից հետո հատուկ քննչական ծառայությունում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով հարուցված քրեական գործերը (նյութերը), ինչպես նաև կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործի հարուցման փուլում գտնվող գործերը փոխանցվում են հակակոռուպցիոն կոմիտե:

24. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը այլ քննչական մարմիններում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերը (նյութերը) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է այդ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համաձայնությամբ հանձնել հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթին»:

2021 թվականի հոկտեմբերի 23-ից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերի հարուցման հարցի լուծումը և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության կատարումն ամբողջությամբ վերապահվել է բացառապես Հակակոռուպցիոն կոմիտեին: Այլ կերպ ասած՝ կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով գործերի քննությունը վերապահվել է Հակակոռուպցիոն կոմիտեում 30 ինքնավար թափուր պաշտոն ժամանակավորապես զբաղեցնող, իսկ հետագայում՝ հաստիքների վերջնական համալրումից հետո ընդհանուրը՝ 40 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն կոմիտեում 40 ինքնավար պաշտոնների մի մասը զբաղեցնելու են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, վարչության պետերն ու նրանց տեղակալները, այսինքն՝ ստացվում է, որ կոնկրետ քրեական գործերով նախաքննություն կատարող անձանց (քննիչների) թիվն ավելի քիչ է լինելու վերը նշված 40-ի համեմատությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2021 թվականի մարտի 24-ի թիվ ՀՕ-150-Ն օրենքով նախատեսված փոփոխության արդյունքում 190-րդ հոդվածը համալրվել է նոր 5.1-րդ մասով, ըստ որի՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

Սույն Նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է հանրապետության ողջ տարածքում, այդ թվում՝ Հատուկ քննչական ծառայությունում քննվող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քանակային գերակշռությունից: Այսպես՝ միայն 2020 թվականին Հատուկ քննչական ծառայությունում ընդհանուր առմամբ քննվել է 580 քրեական գործ, որից 395-ը եղել է կոռուպցիոն բնույթի, այսինքն՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քննված քրեական

գործերը տոկոսային հարաբերությամբ կազմել են ընդհանուր հանցագործությունների 68,1%-ը:

2021 թվականի մինչև սեպտեմբերի մեկն ընկած ժամանակահատվածում (միայն ութ ամսվա ընթացքում) Հատուկ քննչական ծառայությունում ընդհանուր առմամբ քննվել է 439 քրեական գործ, որից 308-ը կոռուպցիոն բնույթի է, այսինքն՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քննված քրեական գործերը տոկոսային հարաբերակցությամբ գերակշիռ մեծամասնություն են կազմել ընդհանուր հանցագործությունների մեջ, տոկոսային արտահայտմամբ՝ 70,1 %:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների էական աճ է գրանցվել:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2020 թվականին պաշտոնապես հրապարակված տեղեկություններին՝ անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է ընդհանուր առմամբ 1114 կոռուպցիոն բնույթի հանցագործություն, իսկ նույն ժամանակահատվածում վարույթում գտնված քրեական գործերով ու նյութերով կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քանակը կազմել է 1914: 2021 թվականի մինչև հուլիսի մեկն ընկած ժամանակահատվածում գրանցված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քանակը կազմել է 534 գործ:

Հակակոռուպցիոն կոմիտեն, մասնագիտացված լինելով բացառապես կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությամբ, ներկայումս իր վարույթ է ընդունել և քննում է մեծ քանակի քրեական գործեր ու նյութեր, հետևաբար քննիչներն աշխատում են աննախադեպ մեծ ծանրաբեռնվածության պայմաններում: Ուստի՝ առկա է իրական վտանգ, որ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ռեսուրսը բավարար չի լինելու նման մեծ ծավալով

<sup>1</sup> Տե՛ս [https://armstat.am/file/article/sv\\_12\\_20a\\_540.pdf](https://armstat.am/file/article/sv_12_20a_540.pdf):

գործերի քննությունն իրականացնելու համար, ինչը թերևս անկասկած անդրադառնալու է ինչպես գործերի քննության որակի, այնպես էլ ողջամիտ ժամկետի հիմնարար սկզբունքի պահպանման վրա:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը ողջամիտ ժամկետի պահպանման պահանջի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- մինչ տարբեր ձգձգումներն ինքնին հարցեր չեն առաջացնում, դրանք միասին վերցրած և հանրագումարային առումով կարող են դառնալ ողջամիտ ժամկետը գերազանցելու պատճառ<sup>2</sup>,

- «Երկարատև ժամանակահատվածը, որի ընթացքում վարույթը...դանդաղում է...» առանց ակնկալվող որևէ բացատրության, անընդունելի է<sup>3</sup>,

- Վարույթի որոշակի փուլում ձգձգումը կարող է թույլատրելի լինել՝ պայմանով, որ վարույթի ընդհանուր տևողությունը չափազանց երկար չլինի<sup>4</sup>,

- Վարույթի տևողության ողջամտությունը պետք է գնահատվի հետևյալ չափանիշների լույսի ներքո՝ գործի բարդություն, դիմումատուի և իրավապահ մարմինների դրսևորած վարքագիծ և այլն<sup>5</sup>,

- Գործի բարդությունը կարող է կապված լինել և՛ փաստերի հիմքով, և՛ օրենքի հիմքով բարձրացվող հարցերի հետ<sup>6</sup>,

- Պետությունը պատասխանատու է իր բոլոր մարմինների համար՝ ոչ միայն դատական մարմինների, այլև բոլոր հասարակական հաստատությունների համար<sup>7</sup>:

ՄԻԵԴ վերոհիշյալ դիրքորոշումների լույսի ներքո կարելի է արձանագրել, որ ողջամիտ ժամկետում գործի քննություն չապահովելը խախտում է «Մարդու

<sup>2</sup> Deumeland-ն ընդդեմ Գերմանիայի, § 90:

<sup>3</sup> Beaumartin-ն ընդդեմ Ֆրանսիայի, § 33:

<sup>4</sup> Pretto-ն և այլք ընդդեմ Իտալիայի, § 37:

<sup>5</sup> Comingersoll S.A.-ն ընդդեմ Պորտուգալիայի [ՄՊ], Frydlender-ն ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ], § 43, Sürmeli-ն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ], § 128):

<sup>6</sup> (Katte Klitsche de la Grange-ն ընդդեմ Իտալիայի, § 55, Papachelas-ն ընդդեմ Հունաստանի [ՄՊ], § 39:

<sup>7</sup> Martins Moreira-ն ընդդեմ Պորտուգալիայի, § 60:

իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը:

Ոչ միայն այդ, այլև պետությանը հասցված վնասի տեսանկյունից ևս բավականին կարևոր է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարների կարճ ժամկետներում վերադարձը, ինչը հնարավոր է իրականացնել միայն օպերատիվ քննության դեպքում, այլապես առավել մեծ է վտանգը, որ տվյալ ակտիվները հնարավոր է օտարվեն:

Հարկ է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեում 2021 թվականի հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում քննվել է կոռուպցիոն բնույթի 280 քրեական գործ, նախապատրաստվել է 171 նյութ: Այսպես՝ տվյալ ժամանակահատվածում յուրաքանչյուր քննիչ իր վարույթում միջինում ունեցել է 10-11 քրեական գործ, ինչը թերևս չի կարող չանդրադառնալ քննության որակի վրա: Ուստի ակնհայտ է, որ քննչական ենթակայության քրեադատավարական օրենքի գործող կարգավորումներով Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող 33 քննիչների (մնացած 7-ը Կոմիտեի նախագահի տեղակալներն են և ստորաբաժանումների պետերը) ծանրաբեռնվածությունը մեծ չափերի է հասնելու, և նախորդ ժամանակահատվածի կոռուպցիոն հանցագործությունների թվական տվյալներից ելնելով՝ 1 քննիչի ծանրաբեռնվածությունը կարող է գերազանցել տարեկան 58 գործը:

Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով սահմանված կոռուպցիոն բնույթի բոլոր գործերի քննությունը Կոմիտեին վերապահելը չի կարող արդարացված համարվել, այն հաշվառմամբ, որ Կոմիտեն չունի համապատասխան ռեսուրսներ նման ահռելի քանակությամբ քրեական գործերի քննությունն ապահովելու համար: Նման ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի նախաքննությամբ Կոմիտեի քննիչներին ծանրաբեռնելը լի է այլ՝

առավել բարդ, ծանր կոռուպցիոն բնույթի գործերով քննության որակի վրա բացասական ազդեցության վտանգով:

Միաժամանակ պետք է նշել, որ 1989 թվականին Փարիզում հիմնադրված «Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի» (այսուհետ՝ ՖԱԹՖ) 30-րդ հանձնարարականի տեխնիկական համապատասխանության և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի արդյունավետության գնահատման համար մեթոդաբանության համաձայն՝ իրավապահ և քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է ապահովված լինեն ֆինանսական, մարդկային և տեխնիկական համարժեք ռեսուրսներով: Պետությունները պետք է ներդնեն հսկողական մեխանիզմներ՝ հավաստիանալու համար, որ այդ մարմինների աշխատակիցներն առաջնորդվում են մասնագիտական բարձր չափանիշներով, այդ թվում՝ կոնֆիդենցիալության մասով, բարեխիղճ կերպով կատարում են իրենց պարտականությունները և ունեն բավարար հմտություններ<sup>8</sup>:

Մարդկային համարժեք ռեսուրսներ ասելով անհրաժեշտ է հասկանալ աշխատակիցներ՝ **քննիչներ, ովքեր կապահովվեն բավարար ժամանակով**, որպեսզի բարեխիղճ ձևով կատարեն իրենց պարտականությունները: Գերծանրաբեռնվածությունն անկասկած բերում է ժամանակային ռեսուրսի սպառման, ինչն էլ բացասական ազդեցություն է ունենում քննիչների աշխատանքի արդյունավետության վրա: Հետևաբար հարցականի տակ է դրվում «մարդկային համարժեք ռեսուրս» ունենալու հանգամանքը:

Բացի այդ, փողերի լվացման և կոռուպցիոն այլ հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը ենթադրում է որոշակի լրացուցիչ տակտիկայի կիրառում: Նախ անհրաժեշտ է հաշվի առնել, որ տվյալները, որոնք ֆինանսական հանցագործությունների վերաբերյալ գործերով դառնում են ապացույց,

---

<sup>8</sup> տես՝ <https://www.fatf-gafi.org/media/fatf/documents/recommendations/pdfs/FATF-40-Rec-2012-Armenian.pdf> էջ 13:



հիմնականում ստացվում են երկու աղբյուրից՝ հանցագործության սուբյեկտից և այլ մասնակիցներից: Քննությունը պլանավորելիս առաջնայինը պետք է լինի հանցանքը կատարած անձի և նրա իրականացրած գործունեության վերաբերյալ տվյալների հնարավորինս շուտ ստանալը, քանի որ հակառակ պարագայում հանցագործություն կատարած անձի կողմից ամեն հնարավոր ջանք կգործադրվի հանցագործության քննության ուղղությունը շեղելու կամ հանցագործության հետքերը թաքցնելու համար: Առավելագույնս օպերատիվ և տակտիկապես գրագետ պետք է գործել հանցագործության համար էական նշանակություն ունեցող տվյալները քննության համար հնարավորինս շուտ հասանելի դարձնելու նպատակով:

Ընդ որում, հարկ է նկատել, որ հարկային և մաքսային քննիչներին իրենց գործունեության շրջանակներում հասանելի է ֆինանսական հանցագործությունների բացահայտման համար բավարար տեղեկատվության, ֆինանսական, տեխնիկական համարժեք ռեսուրսների շրջանակ, որն էլ կարող է հիմք հանդիսանալ հարկային և մաքսային իրավահարաբերություններով փողերի լվացման վերաբերյալ գործերով արդյունավետ նախաքննություն իրականացնելու համար:

Այս պարագայում ևս հարկ է փաստել, որ գերծանրաբեռնված քննիչի մոտ առաջացած ժամանակային դեֆիցիտը բացասաբար է ազդելու հանցանքը կատարած անձի և նրա իրականացրած գործունեության վերաբերյալ տվյալների առավելագույնս օպերատիվ, հնարավորինս արագ ստանալու, հետևաբար քննությունն արդյունավետ պլանավորելու, կատարելու վրա:

ԵԱՀԿ կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ մեթոդական ուղեցույցում ևս մատնանշվում է գործերի քննության հարցում որոշակի առաջնահերթությունների սահմանման ողջամտությունը. որպես կանոն, կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման կամ բացահայտման դեպքերը շատ քիչ են բոլոր երկրներում: Հաշվի առնելով կոռուպցիայի ծավալները, աշխատանքային մեծ ծանրաբեռնվածությունը, մարդկային և ֆինանսական ռեսուրսների սղությամբ պայմանավորված սահմանափակումները՝ կարելի է

եզրակացնել, որ կատարված բոլոր կոռուպցիոն արարքների արդյունավետ հետապնդման հնարավորություն իսկապես չկա: Այս առումով ողջամիտ է, որ պետական քաղաքականությանն ու հասարակական ակնկալիքներին համահունչ նախատեսվեն առաջնահերթ ոլորտներ:

Միևնույն ժամանակ, նշվում է, որ հարկ է հասարակությանը հավաստիացնել այս կամ այն կոնկրետ գործի քննության վերաբերյալ որոշում կայացնելու իրավաչափությունը, ինչը կարող է երաշխավորվել միայն օրենսդրորեն ամրագրված հստակ չափանիշների առկայության դեպքում:

Մեթոդական ուղեցույցի համաձայն քննությունների համակարգը մշտապես արագ արձագանքող վիճակում պահելը և առկա բոլոր ռեսուրսները հանցագործությունների քննությանն ուղղելը, որոնց մասին հաղորդում է ներկայացվել երկարաժամկետ կտրվածքով չափազանց անարդյունավետ է: Հետևաբար առաջնային ուշադրության կենտրոնում պետք է լինեն բարձրաստիճան օղակներում տեղի ունեցող կոռուպցիոն դեպքերի քննությունները, որոնք ամենամեծ վնասն են հասցնում պետությանն ու հասարակությանը: Իսկ բարձրաստիճան օղակներում տեղի ունեցող կոռուպցիոն դեպքերը որոշելու համար ընտրության առավել ակնհայտ չափանիշները հետևյալն են՝ հանցավոր արարքների ծանրություն, և դեպքեր, որոնք ամենամեծ վնասն են հասցնում հասարակության և պետության շահերին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առավել նպատակահարմար է Կոմիտեի ենթակայությանը վերապահել միայն այն կոռուպցիոն բնույթի գործերը, որոնք կատարվել են պաշտոնատար անձանց կողմից, բնականաբար սահմանելով նաև այդ կանոնից բացառություններ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչներին վերապահելով նաև որոշ այլ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քննություն իրականացնելու իրավասություն: Այս նկատառումով Հակակոռուպցիոն կոմիտեի ենթակայությունից հանվել են նաև մասնավոր կոռուպցիոն դեպքերի քննությունը: Տվյալ պարագայում Կոմիտեի ռեսուրսները, ըստ էության կբավարարեն

պայքարել նման կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման և բացահայտման ուղղությամբ և հնարավոր կլինի երաշխավորել ողջամիտ ժամկետների պահպանմամբ առավել արդյունավետ քննության իրականացում:

Հարկ է նկատել նաև, որ գործող կարգավորումներով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչներին է վերապահված նաև այնպիսի հանցագործությունների նախաքննությունը, որոնք իրենց դրսևորումներով հիմնականում կոռուպցիոն որևէ հատկանիշ չեն պարունակում: Դրանք են ՀՀ քրեական օրենսգրքի 308, 309 և 375 հոդվածներով նախատեսված հանցագործությունները՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, ինչպես նաև իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը, եթե կատարվել են բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով:

Այսպիսով՝ առաջարկվում է Կոմիտեի քրեական դատավարության օրենսգրքով տրված ենթակայությունը որոշակի փոփոխությունների ենթարկել, մասնավորապես՝ բացառապես Կոմիտեին վերապահել որոշակի տեսակի հանցագործությունների քննությունը, իսկ մնացյալ կոռուպցիոն հանցագործությունների Կոմիտեի ենթակայությանը վերապահելու համար նախատեսել որոշակի պայման, այն է՝ եթե դրանք կատարվել են որոշակի պաշտոնատար անձանց կողմից:

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ հարկային և մաքսային մարմինների քննիչներին իրենց գործունեության շրջանակներում հասանելի է ֆինանսական հանցագործությունների բացահայտման համար բավարար տեղեկատվություն, ֆինանսական, տեխնիկական համարժեք ռեսուրսների շրջանակ, որն էլ կարող է հիմք հանդիսանալ հարկային և մաքսային իրավահարաբերություններով փողերի լվացման վերաբերյալ գործերով արդյունավետ նախաքննություն իրականացնելու համար, առաջարկվում է քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի (Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը))՝ հարկային և մաքսային

իրավահարաբերությունների վերաբերյալ գործերով նախաքննություն կատարելու իրավասությունը վերապահել համապատասխանաբար հարկային և մաքսային մարմինների քննիչներին:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է այն մասին, որ տարբեր պետություններում գործում են մասնագիտացված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման և քննության գործառույթներով օժտված մարմիններ, որոնք, ընտրված մոդելների տարբերություններով հանդերձ, առաջնորդվում են միջազգայնորեն ընդունված սկզբունքներով: Այսպես, Ուկրաինայում գործում է Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոն: Համաձայն ազգային հակակոռուպցիոն բյուրոյի մասին օրենքի առաջին հոդվածի՝ Բյուրոն պետական իրավապահ մարմին է, որը պատասխանատու է իր իրավասության հետ կապված կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, քննության, բացահայտման, ինչպես նաև կանխարգելման համար: Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետություն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Բյուրոյի աշխատակիցները իրականացնում են և՛ օպերատիվ-հետախուզական գործունեություն, և՛ նախաքննություն:

Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն սահմանվում է, որ Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի դետեկտիվները իրականացնում են մինչդատական վարույթ Ուկրաինայի քրեական օրենսգրքի 191, 206-3, 209, 210, 211, 354 (հանրային իրավունքի իրավաբանական անձանց աշխատակիցների նկատմամբ), 364, 366-2, 366-3, 368, 368-5, 369, 369-2, 410 հոդվածներով նախատեսված քրեական գործերով, եթե առկա է հետևյալ պայմաններից առնվազն մեկը՝

ա. այն կատարվել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից,

բ. քրեական հանցագործության առարկայի չափը կամ պատճառված վնասը հինգ հարյուր կամ ավել անգամ գերազանցում է հանցագործության կատարման

պահին օրենքով սահմանված աշխատունակ անձանց նվազագույն կենսաապահովման չափը,

գ. Ուկրաինայի քրեական օրենսգրքի 369-րդ հոդվածով, 369-2-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված քրեական հանցագործությունը կատարվել է Ուկրաինայի քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասում կամ սույն մասի առաջին կետով նախատեսված պաշտոնատար անձի նկատմամբ:

Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոն ունի ավելի քան 250 քննիչ-դետեկտիվ, որոնցից յուրաքանչյուրի վարույթում տարեկան կտրվածքով միջինով առկա է 4-5 քրեական գործ:

Վերոգրյալի լույսի ներքո և աննախադեպ ծանրաբեռնվածության պատճառով քննիչների կողմից գործերի քննության որակի և ողջամիտ ժամկետի սկզբունքի պահպանման վրա բացասական ազդեցության ռիսկերը կառավարելի դարձնելու համար առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ:

#### **4. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշակվել է Նախագիծ, որով նախատեսվում է Կոմիտեի ենթակայությանը վերապահել որոշակի տեսակի հանցագործությունների քննությունը, իսկ մնացյալ կոռուպցիոն հանցագործությունների Կոմիտեի ենթակայությանը վերապահելու համար նախատեսել որոշ վավերապայմաններ, այն է՝ եթե կատարվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պաշտոնատար անձանց կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից:

Միևնույն ժամանակ, առաջարկվում է, որ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի (Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը))՝ հարկային և մաքսային իրավահարաբերությունների վերաբերյալ գործերով կատարեն

համապատասխանաբար հարկային և մաքսային մարմինների քննիչները, քանի որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է ապահովված լինեն ֆինանսական, տեխնիկական համարժեք ռեսուրսներով, միաժամանակ ֆինանսական հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը ենթադրում է որոշակի լրացուցիչ տակտիկայի կիրառում, իսկ հարկային և մաքսային քննիչներին իրենց գործառույթների շրջանակներում հասանելի է ֆինանսական հանցագործությունների բացահայտման համար բավարար տեղեկատվության շրջանակ:

## **5. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագծերը մշակվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից:

## **6. Անկալվող արդյունքը**

Նախագծի ընդունմամբ անկալվում է ապահովել կոռուպցիոն բնույթի վերոհիշյալ գործերի արդյունավետ, բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ, պատշաճ և բարձր որակի քննությունը: